ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«08» հուլիսի 2022 թ. N 86-Ա/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԳՐԿՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 700-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի ապրիլի 29-ի N 49-Ա/1 հրամանով (այսուհետ՝ հրաման) հաստատված աշխատակարգի 6-րդ կետի պահանջները.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Մերժել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին կից հասարակական խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) կազմը համալրելու համար Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարության) պաշտոնական կայքէջում տեղադրված հայտարարության հիման վրա դիմած ֆիզիկական անձ Ալբինե Ազատյանի, Կոմիտաս Գրիգորյանի, Մագդա Արսենյանի, Շուշանիկ Սահակյանի, Ռոզա Սոլոմոնյանի, Սուսաննա Իսաջանյանի, Նառա Փերիխանյանի (վերջինիս կողմից չի ներկայացվել նաև հրամանով հաստատված աշխատակարգի 4-րդ կետում նշված փաստաթղթերը), «Լույսի աշխարհ» հասարակական կազմակերպության, Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիայի,

Հասարակության զարգացման և կրթական կենտրոնի, Մանկական զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ դիմումատուներ) դիմումները:

2. Սույն հրամանի 1-ին կետում նշված դիմումատուների՝ խորհրդի կազմում ընդգրկվելու վերաբերյալ դիմումների մերժման համար հիմք են հանդիսացել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի հունիսի 3-ի N 62-Ա/1 հրամանով հաստատված խորհրդի անդամների առավելագույն թվաքանակը և հրամանով հաստատված աշխատակարգի 9-րդ կետը, ըստ որի խորհրդի կազմում ընդգրկվելու նախապատվությունը տրվում է այն անձանց և կազմակերպություններին, որոնց գործունեությունն առավել սերտ է առնչվում նախարարության նպատակներին:

3. Նախարարության մամուլի քարտուղարին՝ հրամանով հաստատված աշխատակարգի 6-րդ կետով սահմանված ժամկետում սույն հրամանը հրապարակել Նախարարության պաշտոնական կայքէջում և տեղեկացնել դիմումատուներին:

7/8/2022

X

ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ

Signed by: MKRTCHYAN NAREK 3014890804

Ն. ՄԿՐՏՉՅԱՆ